## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-05/17 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի ապրիլի 28-ին կնքված N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-05/17-36 պայմանագրում 2017 թվականի հուլիսի 19-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ Կողմերի մոտ անհրաժեշտություն է առաջացել երկարաձգել Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը:

Փոփոխության նկարագրություն՝ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետի երկարաձգում 30 օրացուցային օրով:

Փոփոխության հիմնավորում՝ Պայմանագրի 9.4 և 9.6 կետեր:

Պատվիրատու՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
28.04.2017թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-05/17-36
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «19» հուլիսի 2017թ.

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն՝ ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «ՏՈՆԷՔՍ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Շաբաբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պայմանները և հիմք ընդունելով 28.04.2017թ. կնքված N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-05/17-36 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.6 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին.

1.1 Պայմանագրի N2 հավելված հանդիսացող Գնման ժամանակացույցով նախատեսված մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով և «III եռամսյակ մինչև 20.07.2017թ. ներառյալ» բառերը փոխարինել «III եռամսյակ մինչև 19.08.2017թ. ներառյալ» բառերով:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ*** | ***«ՏՈՆԷՔՍ» ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 | Հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թաղ., 45 շ., 42 բն. |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 01401171 |
| Հ/Հ՝ 900011192151 | Հ/Հ՝ 205 222 207 495 1001 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Ղեկավար՝ Կ. Փոլադյան | Տնօրեն՝ Ա. Շաբաբյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ |